# Անժամկետ արձակուրդ

## կամ ապագա հոդվածի նախնական սևագրություն



Ասել, թե զրուցակիցս արտասովոր ճակատագիր ունի, նշանակում է ոչինչ չասել, որովհետև նախքան նա կդառնար իմ զրուցակիցը, որի հետ պետք էր երկխոսություն (կամ ինչպես ասում են՝ հարցազրույց) վարել, ես քիչ համառություն ու հնարամտություն չդրսևորեցի:

Խիստ սակավախոս ժողովուրդ են այդ շահումյանցիները:

Անկեղծ ասած, Շահումյանի պարտիզանական ջոկատի շտաբի պետ Սերգեյ Չալյանի մասին հոդված գրելու խմբագրության առաջադրանքը ես տապալեցի: Նրանից ես չկարողացա անհրաժեշտ տեղեկություններ ստանալ լիարժեք հոդվածի համար:

Օգնեցին նրա ընկերները:

Շահումյանի պաշտպանությունը... Երբեմն, ավելի կուշտ ու խաղաղ ժամանակներում պատմաբանները կանդրադառնան այդ թեմային, իսկ մենք՝ լրագրողներս, ստիպված ենք գործել, գնալով «թարմ հետքերով»:

Թշնամու առաջին դրոշը առգրավել են շահումյանցի հետախույզները... Առաջին հաղթանակը... Առաջին զոհվածները... Այդ ամենի մասին չպետք է մոռանալ...

Չպետք է մոռանալ զոհված Թաթուլ Կրպեյանին՝ Գետաշենի ջոկատի հրամանատարին... Չպետք է մոռանալ Շահեն Մեղրյանին...

Սերգեյը անվերջ պատմում էր հերոս պարտիզանների մասին... Բայց դա չէր ավելացնում հենց իր մասին տեղեկությունը...

10–11 տարի առաջ ղարաբաղցի 16–ամյա պատանին, ավարտելով դպրոցը, զինվորական ուսումնարան ընդունվելու նպատակով մեկնեց տնից:

Ավարտեց Տաշքենդի հրամանատարական զինվորական ուսումնարանը, կռվեց Աֆղանստանում: Հետո ծառայությունը շարունակեց Գերմանիայում... Զինվորականի կյանք, քոչվորի կյանք: Այնտեղից հայտնվեց Կամոյում, ուր վարում էր շրջանի զինկոմի տեղակալի համեմատաբար հանգիստ պաշտոնը... Մի քանի ամսից մեկնեց արձակուրդ: 91 թ. հունիսն էր: Ո՞ւր գնալ, – ծառայակից մի հարց: Նա որոշեց մեկնել Շահումյան... Արձակուրդի առաջին օրերին օգնում էր ազատամարտիկներին. համենայն դեպս Աֆղանստանի քուրայով անցած կադրային զինվորական էր:

Հետո, այնուամենայնիվ, լրիվ նվիրաբերվեց պայքարին... Ահա և ոչ մի կերպ չի ուզում վերադառնալ արձակուրդից: Որոշել է մարտնչել մինչև Հայրենիքի լրիվ ազատագրումը:

*Գերման Ավագյան*

*Լուսանկարը՝ հեղինակի*